«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

Բանկի հետ կապված անձանց և Փոխկապակցված անձանց բացահայտման և գործարքների կնքման կառավարչական ակտ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԷՋ
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	3
3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	4
4. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ	5
5.ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ	5
5.1 Բանկի հետ կապված անձանց բնորոշումը և գործարքների կնքումը	5
5.2 Փոխկապակցված անձանց բնորոշումը և նրանց հետ գործարքների կնքումը	9
6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	14
Հավելված 1- Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ տեղեկությունների աղյուսակի ձև	15
Հավելված 2- Բանկի հետ կապված անձանց հետ կնքված գործարքների մասին տեղեկանք	20

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Բանկի հետ կապված անձանց և Փոխկապակցված անձանց բացահայտման և գործարքների կնքման կառավարչական ակտը» Բանկի խորհրդի կողմից հաստատված կառավարչական ակտ է, որը հաստատվել է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և Բանկի «Ներքին հսկողության համակարգի գործունեության քաղաքականության» /կոդ ՆՀ/ համաձայն և սահմանում է Բանկի հետ կապված անձանց և փոխկապակցված անձանց բացահայտման, նրանց հետ գործարքների կնքման և նրանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և պահպանման կանոնները:

1.2 Կառավարչական ակտը ձևավորվել է ISO 9001:2008 Որակի կառավարման համակարգի ստանդարտների պահանջների համաձայն:

2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Տերմիններ և հասկացություններ.

- *Բանկ* - «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ.
- *Կառավարչական ակտ* - «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Բանկի հետ կապված անձանց և Փոխկապակցված անձանց բացահայտման և գործարքների կնքման կառավարչական ակտ».
- *Բանկի խորհուրդ* կամ *Խորհուրդ* - Բանկի կանոնադրության համապատասխան բաժնետերերի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին.
- *Բանկի վարչություն* կամ *Վարչություն* - Բանկի կանոնադրությամբ նախատեսված Բանկի կոլեգիալ գործադիր մարմին.
- *Բանկի ստորաբաժանում* - հստակ տարանջատված իր իրավասությունները, լիազորությունները, պարտավորություններն ու պատասխանատվությունն ունեցող կառուցվածքային նվազագույն միավոր: Ստորաբաժանումը կարող է գործել կամ որպես կառուցվածքային ինքնուրույն միավոր (ստորաբաժանում), կամ ներառվել մեկ այլ կառուցվածքային կամ տարածքային ստորաբաժանման մեջ.
- *Բանկի ղեկավարներ* - Բանկի խորհրդի նախագահը, խորհրդի անդամները, Բանկի վարչության նախագահը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարն ու անդամները, Բանկի վարչության անդամները, Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները.
- *Բանկի հետ կապված անձինք* - «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված անձինք.
- *Փոխկապակցված անձինք* - «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված անձինք.
- *Պատասխանատու աշխատակից* – Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության Հաշվետվությունների բաժնի պետ.
- *Հաճախորդ* - Բանկում սպասարկվող ֆիզիկական, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.
- *As Bank* - Բանկում կիրառվող գլխավոր գործառնական համակարգ.

- *Բանկի ներքին իրավական ակտ* - Բանկի խորհրդի կամ գործադիր մարմինների կողմից հաստատված և Բանկում պարտադիր բնույթ ունեցող փաստաթուղթ.
- *Տեղեկատվական համակարգ* - Բանկի ներքին լոկալ համակարգչային տեղեկատվական համակարգ:

2.2 Հապավումներ.

- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն:

3 ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կառավարչական ակտի նախագիծը մշակվել է Մեթոդաբանության բաժնի, քննարկվել կառուցվածքային ինքնուրույն և տարածքային ստորաբաժանումների կողմից: Նախագիծը Բանկի վարչության հավանությանն է արժանացել 2011թ. դեկտեմբերի 22-ին 2374-Լ որոշմամբ:

3.2 Կառավարչական ակտը պարտադիր է Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, Բանկի ղեկավարների, ինչպես նաև Բանկի աշխատակիցների համար:

3.3 Կառավարչական ակտը բխում է «Ներքին հսկողության համակարգի գործունեության քաղաքականությունից» /կոդ ՆՀ/ և անմիջականորեն առնչվում է Բանկի հաճախորդների սպասարկումն ու նրանց հետ իրականացվող գործառնություններն անմիջականորեն կանոնակարգող բոլոր ներքին իրավական ակտերի հետ:

3.4 Կառավարչական ակտի ամբողջական կիրարկման համար պատասխանատու է Բանկի գլխավոր հաշվապահը և Վարչության նախագահի տեղակալ-Գործառնական դեպարտամենտի տնօրենը:

3.5 Կառավարչական ակտի ընթացիկ վերահսկողությունն իրականացնում է Բանկի վարչությունը, իսկ ընդհանուր վերահսկողությունը՝ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը:

3.6 Կառավարչական ակտում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Բանկի խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամների կամ Բանկի վարչության առաջարկով կամ ՀՀ գործող օրենսդրության պահանջով: Առաջարկությունների ներկայացման ընթացակարգը սահմանվում է Բանկի «Գործավարության կարգով» /կոդ ՓԻ/Կ-01/, իսկ քննարկման ընթացակարգը՝ Բանկի «Խորհրդի գործունեության կանոնակարգով» /կոդ ԿՁ/ԿԿ-01/:

Կառավարչական ակտը պետք է վերանայվի Բանկի գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան երկու տարին մեկ:

3.7 Կառավարչական ակտն ուժի մեջ է մտնում Խորհրդի հաստատումից տասն օրացուցային օր հետո:

3.8 Կառավարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում Բանկի խորհրդի 09.09.2008թ. 89-Լ որոշմամբ հաստատված «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Բանկի

հետ կապված անձանց հետ գործարքների կնքման կարգը» և 08.01.2007թ. թիվ 1 որոշմամբ հաստատված ««ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ համակարգում փոխկապակցված անձանց բացահայտման մեթոդական ուղեցույցը»:

3.9 Կառավարչական ակտը բաց փաստաթուղթ է և հասանելի է Բանկի ողջ անձնակազմին: Կառավարչական ակտի հասանելիությունն ապահովում է Բանկի խորհրդի նախագահի օգնականը՝ «Գործավարության կարգով» /կոդ ՓԻ/Կ-01/ սահմանված ընթացակարգով՝ Բանկում գործող ներքին լոկալ համակարգչային Տեղեկատվական համակարգում այն տեղադրելու միջոցով:

4 ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ

4.1 Կառավարչական ակտի նպատակն է ապահովել՝

1) Բանկում Բանկի հետ կապված անձանց և Փոխկապակցված անձանց հաշվառման միասնական տեղեկատվական բազայի ստեղծումը.
2) Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքների համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը.
3) Փոխկապակցված հաճախորդների բացահայտումն ու նրանց հետ կնքվող գործարքների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորումը.
4) Բանկի հաճախորդների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում արժանահավատ տեղեկատվության արտացոլումը.
5) ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած Բանկային գործունեությունը կարգավորող հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկի մեջ Հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության արտացոլումը:

4.2 Կառավարչական ակտի առարկան է՝

1) Բանկի հետ կապված անձանց բնորոշումը և գործարքների կնքումը.
2) Փոխկապակցված անձանց բնորոշումը և նրանց հետ գործարքների կնքումը:

5 ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

5.1 Բանկի հետ կապված անձանց բնորոշումը և գործարքների կնքումը

5.1.1 Բանկի հետ կապված անձանց են համարվում՝

1) Բանկի ղեկավարները.
2) Բանկի կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք.
3) «1» և/կամ «2» կետերում նշված անձանց հետ փոխկապակցված և կամ համագործակցող անձինք.
4) Բանկի հետ փոխկապակցված անձինք:

❖ *Բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքումը և հաստատումը*

5.1.2 Բանկի հետ կապված անձանց հետ գործարքները կարող են կնքվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխան:

5.1.3 Հաճախորդների սպասարկումն իրականացնող աշխատակիցները պարտավոր են յուրաքանչյուր անգամ ֆիզիկական, իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հետ ստորև նշված գործարքներից ցանկացածը կնքելիս պարզել հաճախորդի՝ Բանկի հետ կապված լինելու փաստի առկայությունը՝ հաճախորդի անվան (անվանման) վերաբերյալ մուտքագրվող տեղեկությունների և էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների համադրման միջոցով: Բանկի հետ կապվածության փաստ հայտնաբերելու դեպքում վերոնշյալ աշխատակիցները պարտավոր են նշում կատարել As Bank համակարգի համապատասխան դաշտում:

5.1.4 Գործարքների տեսակները՝

- ցպահանջ և ժամկետային ավանդներ ընդունելու.
- առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր տալու, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ իրականացման.
- բանկային երաշխիքների և ակրեդիտիվների (վարկային նամակներ) տրամադրման.
- արժեթղթեր թողարկելու, գնելու (զեղչելու), վաճառելու և սպասարկելու, նման այլ գործառնություններ կատարելու.
- ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեության իրականացնելու.
- ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ մատուցելու, այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում) կառավարելու.
- բանկային ոսկի, ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ գնելու, վաճառելու և կառավարելու.
- ֆինանսական վարձակալություն (լիզինգ) իրականացնելու.
- ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն մատուցելու.
- պարտքերի ետ ստացման գործունեություն իրականացնելու գործարքները:

5.1.5 Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները ենթակա են Բանկի խորհրդի կողմից հաստատման, բացառությամբ՝

- բանկային հաշիվների բացելը և վարելը.
- այլ վճարահաշվարկային ծառայություններ մատուցելը և/կամ այլ կերպ հաճախորդների հաշիվները սպասարկելը.
- արտարժույթ գնելը և վաճառելը (փոխանակելու), այդ թվում՝ դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ կնքելը.
- թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ ի պահ ընդունելը:

5.1.6 Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող ցանկացած գործարք համարվում է Բանկի խորհրդի կողմից հաստատված՝

- Բանկի աշխատակից չհանդիսացող Բանկի հետ կապված անձանց համար, եթե տվյալ գործարքը համապատասխանում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին և այն պայմաններին (գործարքի գումար, տոկոսադրույքներ, ժամկետներ, արժույթ և այլ էական պայմաններ), որոնք հրապարակվել կամ գործում են Բանկի բոլոր հաճախորդների համար.
- Բանկի աշխատակից հանդիսացող Բանկի հետ կապված անձանց համար, եթե տվյալ գործարքը համապատասխանում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին և այն պայմաններին (գործարքի գումար, տոկոսադրույքներ, ժամկետներ, արժույթ և այլ էական պայմաններ), որոնք գործում են Բանկի բոլոր աշխատակիցների համար:

5.1.7 Կառավարչական ակտի 5.1.5 և 5.1.6 կետում նշված պահանջներին չհամապատասխանող՝ Բանկի և նրա հետ կապված անձանց միջև գործարքի հաստատումը Բանկի խորհրդի կողմից իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

- մինչև Բանկի հետ գործարքի կնքումը, Բանկի հետ կապված անձը դիմում է Բանկի վարչության նախագահին՝ գործարքը կնքելու նպատակով Բանկի խորհրդի թույլտվությունը ստանալու համար: Դիմումը պետք է լինի ազատ ոճի, որի մեջ պարտադիր նշվում են գործարքի գումարը, տեսակը, արժույթը, տոկոսը, ժամկետը, տոկոսների վճարման հաճախականությունը և գործարքին բնորոշ էական այլ պայմաններ և Բանկի հետ կապված լինելու հանգամանքը.
- եթե Բանկի խորհուրդը համաձայնություն է տալիս առաջարկվող պայմաններով գործարքի կնքմանը, ապա Բանկի հետ կապված անձի հետ կնքվում է պայմանագիր, որը համարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի «Բանկի հետ կապված անձանց հետ գործարքների» հոդվածի պահանջի իմաստով հաստատված Բանկի խորհրդի կողմից.
- եթե Բանկի խորհուրդը համաձայնություն չի տալիս առաջարկվող պայմաններով գործարքի կնքմանը, ապա Բանկի հետ կապված անձի հետ գործարքը մերժվում է և այդ մասին Վարչության նախագահը ողջամիտ ժամկետում տեղեկացնում է Բանկի հետ կապված անձին:

❖ *Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ տեղեկատվության համալրումը, փոփոխումը պահպանումը և տրամադրումը*

5.1.8 Համաձայն գործող օրենսդրության Բանկի As Bank համակարգում ստեղծվում է Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազա, որտեղ հավաքագրվում և պահպանվում են Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ տեղեկություններ (Հավելված 1 /կոդ ՆՀ/Ա-003-01/): Էլեկտրոնային տեղեկատվական բազայում պարունակվող տեղեկությունները համարվում են սահմանափակ օգտագործման տեղեկություններ, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: Այս տեղեկատվության տրամադրման գործընթացը սահմանվում է Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերով:

Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազայում պարունակվող տեղեկությունները (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) առանց սահմանափակման կարող են տրամադրվել Բանկի խորհրդի նախագահին, խորհրդի անդամներին, Վարչության նախագահին, ՀՀ կենտրոնական բանկի վերստուգող

խմբին, Բանկի աուդիտորական ստուգումն իրականացնող կազմակերպությանը և Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և աշխատակիցներին:

Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազայում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին տրամադրման կարգը սահմանվում է Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերով:

5.1.9 Բանկում պահպանվում են Բանկի ղեկավարների և Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1) անձի անվանումը, անձնագրային տվյալները (անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը).
2) անձի ծննդյան օր/ամիս/ամսաթիվ.
3) բնակության և/կամ գրանցման վայրը.
4) գործունեության տեսակը կամ աշխատանքի ոլորտը.
5) Բանկի հետ կապվածության ձևը.
6) Բանկի հետ հարաբերությունների բնույթը.
7) Բանկին տրված փոխառությունները.
8) Բանկի կանոնադրական հիմնադրամում կատարված ներդրումները.
9) Բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները.
10) այլ բանկերից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները.
11) Բանկում ներդրված ավանդները.
12) Բանկի հանդեպ ունեցած պայմանական և այլ փոխառությունները.
13) որպես Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների գծով պարտավորությունների կատարման ապահովման միջոց հանդիսացող գրավադրված գույքի նկարագիրը, գտնվելու վայրը.
14) անձի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները):

5.1.10 Բանկի ղեկավարները և Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք պարտավոր են՝

- Կառավարչական ակտի 5.1.9 կետ 1, 3-8, 10, 13 և 14 ենթակետերում նշված տեղեկություններում կատարված յուրաքանչյուր փոփոխության դեպքում ծանուցել Պատասխանատու աշխատակցին, փոփոխության կատարման օրվանից տասնօրյա ժամկետում:
- Կառավարչական ակտի 5.1.9 կետի 9, 11 և 12 ենթակետերում նշված տեղեկությունների փոփոխության դեպքում դրանք ներկայացնել Պատասխանատու աշխատակցին յուրաքանչյուր ամսվա վերջին օրը՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:

Կառավարչական ակտի 5.1.10 կետի առաջին և երկրորդ ենթակետերում նշված ժամկետներում Բանկի ղեկավարներից և Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանցից ծանուցումներ չստանալու դեպքում համարվում է, որ նրանց վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ չեն կատարվել: Նշված ժամկետներում փոփոխված տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում, չտրամադրման արդյունքում առաջացած բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է փոփոխված տեղեկատվությունը չտրամադրած անձը:

5.1.11 Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային տեղեկատվական բազայում զետեղում և դրանում հետագայում կատարվող փոփոխությունները գրանցում և հաշվառում է Պատասխանատու աշխատակիցը:

5.1.12 Բանկի ղեկավարները և Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք պատասխանատվություն են կրում Պատասխանատու աշխատակցին իրենց վերաբերյալ տրամադրած տեղեկությունների արժանահավատության համար:

5.1.13 Մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, Պատասխանատու աշխատակիցը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում Բանկի խորհրդին (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) տվյալ եռամսյակի ընթացքում Բանկի հետ կապված անձանց հետ կնքված գործարքների մասին (Հավելված 2 /կոդ ՆՀ/Ա-003-02/):

5.2 Փոխկապակցված անձանց բնորոշումը և նրանց հետ գործարքների կնքումը

5.2.1 Փոխկապակցված անձինք են համարվում՝

1) *Իրավաբանական անձանց փոխկապակցվածությունը* - իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե՝
   - տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.
   - նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և/կամ մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամներն իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուս անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելիին կամ ունեն օրենքով չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.
   - նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների թվի մեկ երրորդը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.
   - նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե նրանք այդպիսիք են ճանաչվել ՀՀ կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով:

2) *Ֆիզիկական անձանց փոխկապակցվածությունը* - ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք այդպիսիք են ճանաչվել ՀՀ կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով, կամ եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինը և երեխաները:

3) *Ֆիզիկական և իրավաբանական անձանց փոխկապակցվածությունը* - Ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ նրանք այդպիսիք են ճանաչվել ՀՀ կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հաղիսանում է՝
   - տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տնօրինող մասնակից.
   - օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.
   - տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, վարչության անդամ, գլխավոր հաշվապահ, նրա տեղակալ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար, անդամ կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ նման այլ մարմինների անդամ.
   - իրավաբանական անձի կամ նրա տարածքային ստորաբաժանման այնպիսի աշխատակից կամ այն կառուցվածքային ստորաբաժանման (այդ թվում՝ դեպարտամենտի, վարչության, բաժնի) աշխատակից, որը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ իրավաբանական անձի կանոնադրության կամ ներքին իրավական այլ ակտերի համաձայն կամ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ կապված է իրավաբանական անձի հիմնական գործունեության հետ կամ աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

5.2.2 Իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցությունը բաժանվում է 2 ձևի՝ ուղղակի և անուղղակի:

1) *Ուղղակի նշանակալից մասնակցություն* - իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում այնպիսի մասնակցություն է, որի դեպքում մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը:
2) *Անուղղակի նշանակալից մասնակցություն* - իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում այնպիսի մասնակցություն է, որի դեպքում՝
   - մասնակիցը չունի տվյալ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը կամ ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն սույն Կառավարչական ակտով սահմանած չափանիշներով հիմնավորված այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները.

- մասնակիցը չունի տվյալ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը կամ ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները՝ տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով.
- մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոս և ավելի մասնակցություն.
- մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ունի կամ չունի մասնակցություն և սույն Կառավարչական ակտով սահմանած չափանիշներով իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները:

3) *<u>Անուղղակի նշանակալից մասնակցության չափանիշները</u>* - Անուղղակի նշանակալից մասնակցությունը կարող են առաջացնել հետևյալ դեպքերը՝
- երրորդ անձը հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի որոշումները՝ իրենց միջև կնքված պայմանագրի ուժով.
- առկա է իրավաբանական անձի և երրորդ անձի միջև կնքված համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագիր, որով իրավաբանական անձը հանդես է գալիս որպես օգտագործող.
- առկա է իրավաբանական անձի և երրորդ անձի միջև կնքված առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագիր, որով տվյալ իրավաբանական անձն իր գույքի գերակշռող մասը ներդրել է ընդհանուր գործում.
- առկա է իրավաբանական անձի և երրորդ անձի միջև կնքված վարկային կամ փոխառության պայմանագիր (մուրհակ, պարտավորագիր, պարտատոմս կամ այլ պարտավորական արժեթուղթ), որի միջոցով ձևավորվել է տվյալ իրավաբանական անձի ակտիվների գերակշռող մասը, կամ որի միջոցով փոխատուն փոխառուին է տրամադրել իր ակտիվների գերակշռող մասը.
- առկա է իրավաբանական անձի և երրորդ անձի միջև կնքված ծառայությունների մատուցման, կապալի, հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագիր, որով տվյալ իրավաբանական անձը պարտավորվել է որպես կատարող, կապալառու, հանձնակատար, կոմիսիոներ կամ գործակալ մատուցել որոշակի ծառայություններ կամ կատարել որոշակի աշխատանքներ, կամ կատարել որոշակի իրավաբանական և այլ գործողություններ, կամ կնքել է մեկ կամ մի քանի գործարքներ, և որոնց միջոցով տվյալ իրավաբանական անձը ձևավորում է իր տարեկան եկամուտների նշանակալի մասը.

- առկա է իրավաբանական անձի և երրորդ անձի միջև կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որով տվյալ իրավաբանական անձը (փոխառուն) մեկ տարուց ավելի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում է փոխատուի գույքը, և այդ գույքի արժեքը գերազանցում է փոխառուի ակտիվների նշանակալի մասը: Սույն դրույթը կիրառվում է նաև գույքի վարձակալության և ֆինանսական վարձակալության (լիզինգ) պայմանագրերի վրա.
- առկա է իրավաբանական անձի և երրորդ անձի միջև կնքված պայմանագիր, որով երրորդ անձը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի հիմնական մատակարար, կամ երրորդ անձի կողմից մատակարարվող ապրանքների նշանակալի մասը մատակարարում է տվյալ իրավաբանական անձին: Սույն դրույթի իմաստով՝ հիմնական մատակարար է համարվում այն մատակարարը, որը մատակարարում է տվյալ իրավաբանական անձի կողմից ձեռք բերվող ապրանքների նշանակալի մասը.
- երրորդ անձը իրավաբանական անձի հետ միասին հանդիսանում են տվյալ իրավաբանական անձի գույքի գերակշռող մասի ընդհանուր սեփականատեր (բաժնային կամ համատեղ).
- երրորդ անձը հանդիսանում է իրավաբանական անձի գույքի գերակշռող մասի առաջնային գրավի իրավունքով գրավառու:

❖ *Փոխկապակցված անձանց հետ գործարքների կնքումը և հաստատումը*

5.2.3 Փոխկապակցված անձանց հետ գործարքները կարող են կնքվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխան:

5.2.4 Հաճախորդների սպասարկումն իրականացնող աշխատակիցները պարտավոր են յուրաքանչյուր անգամ ֆիզիկական, իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հետ գործարքներ կնքելիս պարզել հաճախորդների փոխկապակցվածության փաստի առկայությունը՝ հաճախորդի անվան (անվանման) վերաբերյալ մուտքագրվող տեղեկությունների և էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների համադրման միջոցով: Փոխկապակցվածության փաստ հայտնաբերելու դեպքում վերոնշյալ աշխատակիցները պարտավոր են նշում կատարել As Bank համակարգի համապատասխան դաշտում:

❖ *Փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվության համալրումը, փոփոխումը պահպանումը և տրամադրումը*

5.2.5 Համաձայն գործող օրենսդրության Բանկի As Bank համակարգում ստեղծվում է փոխկապակցված անձանց վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազա, որտեղ հավաքագրվում և պահպանվում են փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ: Էլեկտրոնային տեղեկատվական բազայում պարունակվող տեղեկությունները համարվում են սահմանափակ օգտագործման տեղեկություններ, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: Այս տեղեկատվության տրամադրման գործընթացը սահմանվում է Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերով:

Փոխկապակցված անձանց վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազայում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին տրամադրման կարգը սահմանվում է Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերով:

5.2.6 Փոխկապվածությունը բացահայտելու համար Բանկի կողմից օգտագործվում են Հաճախորդի ներկայացրած հետևյալ փաստաթղթերը.

Իրավաբանական անձանց համար՝

1) Պատշաճ կերպով գրանցված գործող կանոնադրությունը, հիմնադիր պայմանագիրը, վերջիններիս փոփոխություններն ու լրացումները.
2) Ընկերության ներքին փաստաթղթերը (տնօրենների խորհրդի, վարչության, վարչության նախագահի կամ գլխավոր տնօրենի գործունեության կանոնակարգերը և այլն).
3) Պետական գրանցման վկայական, հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունների և լրացումների գրանցման վերաբերյալ վկայականներ.
4) Վերադաս կամ իրավասու մարմնի կողմից ղեկավարների նշանակման որոշումներն (արձանագրությունները) և հրամանները, ղեկավարների անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները.
5) Ղեկավարի լիազորությունները որոշելու նպատակով՝ Գործատուի և վերջինիս միջև կնքված աշխատանքային պայմանագրի պատճեն կամ լիազորությունների վերաբերյալ համապատասխան գրավոր սահմանումը.
6) Գլխավոր հաշվապահի նշանակման հրամանը, անձնագրի և սոցիալական քարտի պատճենները.
7) Տեղեկություններ մասնակիցների և ղեկավարների ընտանիքի կազմի վերաբերյալ, ընտանիքի անդամների անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները, ինչպես նաև տեղեկատվություն միևնույն ընտանիքի անդամներ հանդիսացող՝ հոր, մոր, ամուսնու, ամուսնու ծնողների, տատու, պապու, քրոջ, եղբոր, երեխաների, քրոջ, եղբոր ամուսնու և երեխաների վերաբերյալ.
8) Բաց բաժնետիրական ընկերության համար՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված, փակ բաժնետիրական ընկերության համար՝ բաժնետերերի ռեեստր վարողի կողմից տրված, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեպքում ռեգիստրից տրված տեղեկանք հիմնադիրների (բաժնետերերի) վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանք, Հաճախորդի կանոնադրական հիմնադրամում ուղղակի և/կամ անուղղակի մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ, վերջիններիս անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները: Իրավաբանական անձ հանդիսացող մասնակիցների դեպքում՝ վերջիններիս կանոնադրությունը, պետական ռեգիստրի վկայականը, վերադաս կամ իրավասու մարմնի կողմից ղեկավարների նշանակման որոշումներն (արձանագրությունները) և հրամանները, ղեկավարների անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները.
9) Հիմնական մատակարարների և սպառողների վերաբերյալ տեղեկություններ՝ խոշոր մատակարարների հետ կնքված պայմանագրերը (ապրանքների առք ու վաճառքի, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման և այլ պայմանագրերը).
10) Երրորդ անձանց հետ համատեղ գործունեության և/կամ համագործակցության վերաբերյալ պայմանագրերը.

11) Ընդհանուր սեփականության իրավունքով Հաճախորդի գույքի սեփականատեր հանդիսացող անձանց իրավաբանական փաստաթղթերը, վերջիններիս հետ կնքված պայմանագրերը.
12) Հաճախորդի գույքի նկատմամբ այլ անձանց կողմից սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ.
13) Վարձակալության կամ օգտագործման համար տրված և/կամ ստացված գույքի վարձակալության կամ օգտագործման պայմանագրերը, Պետական լիազոր մարմնում վարձակալության կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականները.
14) Տեղեկություններ Հաճախորդի կողմից այլ անձանց հանդեպ և/կամ այլ անձանց կողմից Հաճախորդի հանդեպ ստանձնած պարտավորությունների վերաբերյալ, պարտավորությունների առաջացման հիմքերը (պայմանագրեր, համաձայնագրեր, պարտավորագրեր և այլն).
15) Տեղեկություններ ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրից՝ բանկերի հանդեպ ստանձնած և/կամ մարված պարտավորությունների վերաբերյալ:

<u>Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար՝</u>

1) Անձնագրի և սոցիալական քարտի պատճեններ.
2) Տեղեկանք համապատասխան մարմնից (ԲԾՏ-ից, համատիրությունից և այլն) գրանցված անձանց և ընտանիքի կազմի վերաբերյալ.
3) Գրանցված անձանց և ընտանիքի անդամների անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները, ինչպես նաև տեղեկատվություն միևնույն ընտանիքի անդամներ հանդիսացող՝ հոր, մոր, ամուսնու, ամուսնու ծնողների, տատու, պապու, քրոջ, եղբոր, երեխաների, քրոջ, եղբոր ամուսնու և երեխաների վերաբերյալ.
4) Տեղեկություններ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում Հաճախորդի ուղղակի և/կամ անուղղակի նշանակալից մասնակցության վերաբերյալ.
5) Տեղեկանք աշխատանքային վայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար նաև իրավաբանական փաստաթղթերի (պետական ռեգիստրի կողմից տրված վկայական՝ ներդիրներով) պատճենները.
6) Սեփականության իրավունքով Հաճախորդին պատկանող գույքի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքները հաստատող փաստաթղթեր.
7) Համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքի համասեփականատերերի անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները.
8) Տեղեկություններ Հաճախորդի կողմից այլ անձանց հանդեպ և/կամ այլ անձանց կողմից Հաճախորդի հանդեպ ստանձնած պարտավորությունների վերաբերյալ, պարտավորությունների առաջացման հիմքերը (պայմանագրեր, համաձայնագրեր, պարտավորագրեր և այլն).
9) Տեղեկություններ ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրից՝ բանկերի հանդեպ ստանձնած և/կամ մարված պարտավորությունների վերաբերյալ:

6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 /կոդ ՆՀ/Ա-003-01/ - կետ 5.2.1 – Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ տեղեկությունների աղյուսակի ձև:
Հավելված 2 /կոդ ՆՀ/Ա-003-02/ - կետ 5.2.11 – Բանկի հետ կապված անձանց հետ կնքված գործարքների մասին տեղեկանք:

Հավելված 1 /կոդ ՆՀ/Ա-003-01/

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ է

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ խորհրդի

«13» հունվարի 2012թ. թիվ 9-Լ որոշմամբ

Ենթահավելված 1/1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ղեկավարի վերաբերյալ

«-----» ---------- 20--թ. դրությամբ

1.	Ղեկավարի անունը և անձնագրային տվյալները	
2.	Ղեկավարի ծննդյան մասին տվյալները	
3.	Գրանցման կամ փաստացի բնակության վայրը	
4.	Բանկի հետ կապվածության ձևը	
5.	Բանկի հետ հարաբերությունների բնույթը	
6.	Բանկում ներդրված ավանդները	
7.	Բանկին տրված փոխառությունները	
8.	Բանկի կանոնադրական հիմնադրամում կատարված ներդրումները	
9.	Բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները	
10.	Այլ բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները	
11.	Բանկում գրավադրված գույքի նկարագիրը, գտնվելու վայրը	
12.	Բանկի հանդեպ ունեցած պայմանական և այլ պարտավորությունները	
13.	ՀՀ կենտրոնական բանկի կողմից ղեկավարին տրված որակավորման վկայականի վերաբերյալ տվյալները	

Ոչ պաշտոնական հրապարակում

14.	Ղեկավարի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները)	

Ենթահավելված 1/2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կանոնադրական հիմնադրամում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի վերաբերյալ

«-----» ---------- 20--թ. դրությամբ

1.	Անձի անունը, անձնագրային տվյալները /անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը/	
2.	Անձի ծննդյան մասին տվյալները	
3.	Գրանցման կամ փաստացի բնակության վայրը	
4.	Գործունեության տեսակը կամ աշխատանքի ոլորտը	
5.	Բանկի հետ հարաբերությունների բնույթը	
6.	Բանկում ներդրված ավանդները	
7.	Բանկին տրված փոխառությունները	
8.	Բանկի կանոնադրական հիմնադրամում կատարված ներդրումները	
9.	Բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները	
10.	Այլ բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները	
11.	Բանկում գրավադրված գույքի նկարագիրը, գտնվելու վայրը	
12.	Բանկի հանդեպ ունեցած պայմանական և այլ պարտավորությունները	
13.	Անձի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները)	

Ենթահավելված 1/3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կանոնադրական հիմնադրամում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի վերաբերյալ

«-----» ---------- 20--թ. դրությամբ

1.	Անձի անունը, անձնագրային տվյալները /անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը/	
2.	Անձի ծննդյան մասին տվյալները	
3.	Գրանցման կամ փաստացի բնակության վայրը	
4.	Գործունեության տեսակը կամ աշխատանքի ոլորտը	
5.	Բանկի հետ հարաբերությունների բնույթը	
6.	Բանկում ներդրված ավանդները	
7.	Բանկին տրված փոխառությունները	
8.	Բանկի կանոնադրական հիմնադրամում կատարված ներդրումները	
9.	Բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները	
10.	Այլ բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները	
11.	Բանկում գրավադրված գույքի նկարագիրը, գտնվելու վայրը	
12.	Բանկի հանդեպ ունեցած պայմանական և այլ պարտավորությունները	
13.	Անձի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները)	

Ենթահավելված 1/4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ղեկավարի և/կամ կանոնադրական հիմնադրամում նշանակալից (ուղղակի, անուղղակի) մասնակցություն ունեցող անձի հետ փոխկապակցված և/կամ համագործակցող անձի վերաբերյալ

«-----» ---------- 20--թ. դրությամբ

1.	Անձի անունը, անձնագրային տվյալները /անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը/	
2.	Անձի անունը, ազգանունը, ծննդյան վկայականի սերիան և համարը*	
3.	Անձի ծննդյան մասին տվյալները	
4.	Բանկի ղեկավարի և/կամ կանոնադրական հիմնադրամում նշանակալից (ուղղակի, անուղղակի) մասնակցություն ունեցող անձի հետ կապվածության ձևը	
5.	Գրանցման կամ փաստացի բնակության վայրը (հնարավորության դեպքում)	
6.	Գործունեության տեսակը կամ աշխատանքի ոլորտը (հնարավորության դեպքում)	
7.	Բանկի հետ հարաբերությունների բնույթը**	
8.	Բանկում ներդրված ավանդները**	
9.	Բանկին տրված փոխառությունները**	
10.	Բանկի կանոնադրական հիմնադրամում կատարված ներդրումները**	
11.	Բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները**	
12.	Այլ բանկից ստացված բոլոր տեսակի վարկերը և այլ փոխառությունները**	
13.	Բանկում գրավադրված գույքի նկարագիրը, գտնվելու վայրը**	

14.	Բանկի հանդեպ ունեցած պայմանական և այլ պարտավորությունները**	

** Լրացվում է միայն այն դեպքում, եթե անձը չունի անձնագիր:*

*** Եթե բանկի ղեկավարը կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձն իր հետ փոխկապակցված և/կամ համագործակցող անձի վերաբերյալ չի տիրապետում նշված կետով նախատեսվող տեղեկատվությանը, ապա համապատասխան տողում լրացվում է «Չեմ տիրապետում» բառերը: Այդպիսի տեղեկատվությունը Բանկում առկայության դեպքում լրացվում է Պատասխանատու աշխատակցի կողմից:*

Հավելված 2 /կոդ ՆՀ/Ա-003-02/

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ է

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ խորհրդի

«13» հունվարի 2012թ. թիվ 9-Լ որոշմամբ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

ՏԵՂԵԿԱՆՔ

Բանկի հետ կապված անձանց գործարքների վերաբերյալ

1.Թղթակցային հաշիվ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

2.Բանկային հաշիվներ

Բանկի խորհուրդ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի գործադիր մարմին

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով

Ընդամենը				

Բանկի ներքին աուդիտ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի հետ կապված այլ անձինք

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				
Ընդամենը բանկային հաշիվներ				

3.Ժամկետային ավանդ

Բանկի խորհուրդ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի գործադիր մարմին

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով

Ընդամենը				

Բանկի ներքին աուդիտ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի հետ կապված այլ անձինք

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				
Ընդամենը ժամկետային ավանդներ				

4.Ստացված վարկեր, օվերդրաֆտներ

Բանկի խորհուրդ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի գործադիր մարմին

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի ներքին աուդիտ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի հետ կապված այլ անձինք

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				
Ընդամենը վարկեր, օվերդրաֆտներ				

5.Ստացված կանխավճարներ

Բանկի խորհուրդ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի գործադիր մարմին

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի ներքին առդիտ

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				

Բանկի հետ կապված այլ անձինք

Անվանում	h/h	արժույթ	մնացորդ	մնացորդ ՀՀ դրամով
Ընդամենը				
Ընդամենը կանխավճարներ				

5.Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ

Բանկի խորհուրդ

աշխատավարձ

պարգևատրում

Բանկի գործադիր մարմին

աշխատավարձ

պարգևատրում

Բանկի ներքին աուդիտ

աշխատավարձ

պարգևատրում

Բանկի հետ կապված այլ անձինք

աշխատավարձ

պարգևատրում

6.Ստացված եկամուտ, կատարված ծախս

Բանկի խորհուրդ

եկամուտ

- տոկոսային

- այլ

ծախս

- տոկոսային

- այլ

Բանկի գործադիր մարմին

եկամուտ

- տոկոսային

- այլ

ծախս

- տոկոսային

- այլ

Բանկի ներքին աուդիտ

եկամուտ

- տոկոսային

- այլ

ծախս

- տոկոսային

- այլ

Բանկի հետ կապված այլ անձինք

եկամուտ
- տոկոսային
- այլ
ծախս
- տոկոսային

- այլ